20.03.2019 թ.
ժամը 09[30]
թիվ՝ 4

<<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ
ք. Երևան, Վարդանանց փակուղի 8Ա

**Արձանագրություն**
*<<ՀՋԿ-ԳՀԾՁԲ-19/4> ծածկագրով գնման ընթացակարգի*
*գնահատող հանձնաժողովի*

**գնահատող հանձնաժողովի նախագահ**
/վարչատնտ. բաժնի պետ/ Աշոտ Հյուսիսյան
**հանձնաժողովի անդամներ** -
/հաշվապահ/ Արմեն Օթարյան
/գույքի կառավարման բաժնի
առաջատար մասնագետ/ Միքայելյան Միքայելյան
/գույքի կառավարման բաժնի մասնագետ/ Նվարդ Վարդանյան
/պարտքերի վերլուծությունների, մոնիթորինգի և
հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ/ Հայրապետ Բարսեղյան
**Հանձնաժողովի քարտուղար՝**
Հարություն Օհանյան

*ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի /այսուհետև՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված*

## 1. Հայտերի բացման նիստի վերսկսման վերաբերյալ

*Հանձնաժողովի նախագահ*՝ Աշոտ Հյուսիսյան

### 1. Կազմակերպված բանակցությունների և մերժված հայտերի մասին մասին՝

1.1 Կազմակերպված բանակցությունների շրջանակներում գնի նվազեցման առաջարկներ ներկայացրեցին Տիգրան Բրուտյան Ա/Ձ-ն՝ 280000 երկու հարյուր ութսուն հազար ՀՀ դրամ և ՖԼԵՇ ՍՊԸ-ն՝ 290000 երկու հարյուր իննսուն հազար:

1.2 Ղեկավարվելով Գնումների մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ մերժել ԱՁ ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ-ի ներկայացրած հայտը, քանի որ ԱՁ ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ-ի ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է պատվիրատուի կողմից սահմանված գնման հայտով գնման առարկայի ձեռքբերման գինը (միավորի գին՝ 2700 X քանակ՝ 200 = 540000 ՀՀ դարմ).

Ընդունել որոշում ***կողմ 5 (հինգ)***, ***դեմ 0 (զրո)*** ձայներով

### 2. Գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մսնակիցների մասին

2.1 Գնահատող հանձնաժողովի կողմից քննարկվեց գնման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան հայտեր ներկայացրած Մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկները և հանձնաժողովը նախապատվությունը տալով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակիցներին.

կողմ ***5 (հինգ)***, դեմ ***0 (զրո)*** ձայներով որոշեց

**գնման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել Տիգրան Բրուտյան Ա/Ձ-ին**

**գնման ընթացակարգի երկրորդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել ՖԼԵՇ ՍՊԸ-ին**

### 3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին

3.1 Գնման ընթացակարգի հրավերով սահմանված Մասնակիցների որակավորման չափանիշների գնահատման արդյունքների հրապարակման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել Կարգի 46-րդ կետով սահմանված ժամկետներում: Գնահատող հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել՝

- Համաձայն Կարգի 43-րդ կետի դրույթներին կատարել հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ

Ընդունել որոշում *կողմ 5 (հինգ)*, դեմ *0 (զրո)* ձայներով

**գնահատող հանձնաժողովի նախագահ**
/վարչատնտ. բաժնի պետ/ Աշոտ Հյուսիսյան

**հանձնաժողովի անդամներ -**
/հաշվապահ/ Արմեն Օթարյան

/գույքի կառավարման բաժնի
առաջատար մասնագետ/ Միքայելյան Միքայելյան

/գույքի կառավարման բաժնի մասնագետ/ Նվարդ Վարդանյան

/պարտքերի վերլուծությունների, մոնիթորինգի և
հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ/ Հայրապետ Բարսեղյան

**Հանձնաժողովի քարտուղար՝**
Հարություն Օհանյան